# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.12.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 03.12.2021թ.),

քննելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ. ներկայացված (01.12.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.11.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար Մասնագիտական ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի տեխնիկական բնութագրով որպես հատուկ պահանջ սահմանվել է, որ Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի աուդիտների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ հանդիսացող ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:

Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկմուտով գնահատվող 30 լավագույն միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Բողոքաբերը և «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն:

Գնանշման հարցման հանձնաժողովը 25.11.2021թ. արձանագրությամբ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտում չի արձանագրում անհամապատասխանություն, չնայած այն հանգամանքին, որ նշված ընկերությունը չի բավարարել /Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ լինելու պահանջին: Որպես ասվածի ապացույց ներկայացնում ենք հետևյալ ներքոնշյալ հղումները, որը ապացուցում է, այն որ Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ չի համապատասխանում ընթացակարգի տեխ. բնութագրով նշված պահանջին (https: /www.ifac.org/who-we-are/committees/transnational-auditors-committee-forum-firms և http://reestr.aaaa.am/): Այս ամենի արդյունքում նույն հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատում է բավարար և թույլ է տալիս, որպեսզի «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն մասնակցի 25.10.2021թ. հրավիրված բանակցություններին: Բանակցությունների արդյունքում «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն ճանաչվում է հաղթող, քանի որ ներկայցրել է նվազագույն գին: Այսինքն հանձնաժողովը հաղթող է ճանաչել մի մասնակցի՝ թույլ տալով նաև մասնակցել բանակցությունների, ում հայտը չի համապատասխանել ընթացակարգի տեխնիկական բնութագրին: Այս դեպքում եթե հանձնաժողովը մերժեր «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ հայտը և չթույլատրեր մասնակցել բանակցությունների, ապա հաջորդ նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հնարավորություն կունենար բանակցությունների արդյունքում նվազեցներ իր գնային առաջարկը մինչև նախահաշվային գին և ճանաչվեր հաղթող: Սակայն իմանալով,

որ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն մասնակցելու է բանակցությունների, իսկ վերջինիս գինը եղել է անտրամաբանական ցածր, այդ իսկ պատճառով և մեր կազմակերպությունը և կարծում ենք մնացած այլ կազմակերպություններ չեն ներկայացել բանակցությունների:

Հայցի պահանջի հիմքում ընկած փաստերի նկատմամբ կիրառելի իրավահարարերություն.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կաավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի

պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են մի միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված

գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետնելը երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթեն կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, նույն ընկերությանը հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները,

2. Ընդունելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

Ընկերության ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

**2. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն Գնումների հետ

կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.12.2021թ. թիվ 39/02-28-983 գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի նոյեմբերի 10-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար Ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 5 մասնակից: Հանձնաժողովը գնահատել է բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին: Բավարար գնահատված մասնակիցների հետ 25.11.21թ. վարվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, որին ներկա է եղել միայն «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը (լիազորագիրը կցվում է): Ակնհայտ է, որ 30.11.2021թ. օրը N ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 ծածկագրով բողոքաբերը գրված բողոքում և նիստի ժամանակ նույն միտքը հնչեցնելով ակնհայտ ստել է, իր մասին արդեն իսկ կարծիք ձևավորելով: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակցի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել: Հանձնաժողովը որոշել է որպես ընտրված մասնակից հայտարարել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին՝ գործելով իրավաչափ և պահանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և գների նվազեցման շուրջ նոր միաժամանակյա բանակցությյուններ վարելու «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի պահանջին, հայտնում ենք, որ մրցույթի մասնակից բոլոր ընկերությունները, այդ թվում «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն հայտով ներկայացված դիմում-հայտարարությամբ (Հավելված 1) հայտնել են, որ հայտը ներկայացնում են հրավերի պահանջներին համապատասխան ուստի և գնահատող հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 67-րդ կետով սահմանված պահանջների համապատասխան ստուգելու իրավունքից չի օգտվել (պետք է հաշվի առնել, որ վերոգրյալը իրավունք է, ոչ թե պարտավորություն):

Հարկ ենք համարում նշել նաև, որ միաժամանակյա բանակցությունները նորից անցկացնելը համարում ենք անհիմն, հաշվի առնելով, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն ներկա է եղել բանակցությանը և վերջինս ունեցել է հնարավորություն նոր նվազեցված գնային առաջարկ ներկայացնելու և 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժելու դեպքում հաղթող ճանաչվելու»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» /ՀՎՀՀ 02618043/ ՍՊ, «Բեյքեր Թիլլի Արմենիա» /ՀՎՀՀ 02586575/, «Բի-Դի-Օ Արմենիա» /ՀՎՀՀ 01569792/, «Գրանթ Թորնթոն» /ՀՎՀՀ 00040569/ և «Երևան-Աուդիտ Կոնսալտ» /ՀՎՀՀ 02703411/ ՓԲ ընկերությունները:

2. Վերը թվարկված ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարությունների համաձայն՝ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ:

3. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ մատուցվող ծառայությունների նկարագրով, սահմանվել է հետևյալը.

«ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի աուդիտների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ հանդիսացող ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:

Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկմուտով գնահատվող 30 լավագույն միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել, հիմք ընդունելով գնահատման թերթիկը, հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | բավարար |

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «x» | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | | 1,950,000.00 |
| | 3 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | | 2,915,000.00 |
| | 5 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | | 6,500,000.00 |
| | 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | x | 360,000.00 |
| | 4 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | | 5,000,000.00 |

## 4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի 30.11.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

***<u>Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:</u>*** Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» /ՀՎՀՀ 02618043/ ՍՊ, «Բեյքեր Թիլլի Արմենիա» /ՀՎՀՀ 02586575/, «Բի-Դի-Օ Արմենիա» /ՀՎՀՀ 01569792/, «Գրանթ Թորնթոն» /ՀՎՀՀ 00040569/ և «Երևան-Աուդիտ Կոնսալտ» /ՀՎՀՀ 02703411/ ՓԲ ընկերությունները:

Վերը թվարկված ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարությունների համաձայն՝ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ մատուցվող ծառայությունների նկարագրով, սահմանվել է հետևյալը.

«ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի աուդիտների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ հանդիսացող ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:

Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկմուտով գնահատվող 30 լավագույն միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել, հիմք ընդունելով գնահատման թերթիկը, հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | բավարար |

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «x» | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | | 1,950,000.00 |
| | 3 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | | 2,915,000.00 |
| | 5 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | | 6,500,000.00 |
| | 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | x | 360,000.00 |
| | 4 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | | 5,000,000.00 |

Ընկերությունը որպես բողոքի հիմնավորում ներկայացրել է նաև Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի պաշտոնական կայքից հղում՝ http://reestr.aaaa.am:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին ուղղված 09.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/20246-2021 գրությամբ, խնդրել է սեղմ ժամկետում հայտնել, արդյո՞ք aaaa.am կայքի http://reestr.aaaa.am/ հղմամբ զետեղված աղյուսակում առկա տեղեկատվությունը բավարար հիմք կարող է հանդիսանալ փաստելու ընկերության աուդիտորական կազմակերպությունների միջազգային ցանցերին անդամակցված լինելը, թե՞ ոչ, մասնավորապես՝ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն հանդիսանում է հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, թե՞ ոչ:

Ի պատասխան վերը շարադրված գրության՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն 13.12.2021թ. թիվ Ա/ԵՆ-111 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 09.12.2021թ. գրության տեղեկացնում ենք, որ aaaa.am կայքի http://reestr.aaaa.am/ հղմամբ զետեղված աղյուսակում առկա տեղեկատվությունը բավարար հիմք կարող է հանդիսանալ փաստելու ընկերության աուդիտորական կազմակերպությունների միջազգային ցանցերին անդամակցված լինելու մասին: Մասնավորապես ***«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ՝ ըստ իր կողմից ներկայացված փաստաթղթերի, չի հանդիսանում միջազգային ցանցի անդամ:***

***Տեղեկացնում ենք նաև, որ Հաշվապահների միջազգային դաշնության անդամ կարող են լինել մասնագիտացված կազմակերպությունները: Ներկայումս այդ կազմակերպությունում անդամ է միայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ***»:

Այսինքն՝ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցներից որևէ մեկը, այդ թվում՝ ***«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն, չեն հանդիսանում*** հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, հետևաբար չեն բավարարում Ընթացակարգի հրավերով սահմանված Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ հանդիսանալու պարտադիր պահանջին:

Ուստի՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի պահանջի 1-ին կետը, այն է՝

պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար մասնագիտական ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, նույն ընկերությանը հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքի պահանջի 2-րդ կետին, այն է՝ պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար մասնագիտական ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում, ապա վերոգրյալից հետևում է, որ նման պայմաններում, այն է՝ ինչպես արդեն սույն որոշմամբ արձանագրվեց, Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած Ընկերություններից որևէ մեկի հայտը չի բավարարում հրավերով սահմանված Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ հանդիսանալու պարտադիր պահանջին, այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1.1 Դադարեցնելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, նույն ընկերությանը հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

1.2 Ընդունելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշում:

2. Բողոքի պահանջը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում ընդունելուն պարտավորեցնելու մասով, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**